

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՐԱԲԱԿԱՆ ՄԻԱՅՅԱԼ  
ԷՄԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ  
ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը և Արաբական Միացյալ Էմիրությունների կառավարությունը՝ հետագայում՝ Կողմերե.

համոզված լինելով, որ գիտատեխնիկական համագործակցությունը երկկողմ հարաբերությունների կարևոր բաղկացուցիչ մաս է,

ընդունելով գիտության և տեխնոլոգիաների ոլորտում համագործակցության անհրաժեշտությունը,

ընդունելով, որ այդպիսի համագործակցությունը կնպաստի երկու պետությունների միջև երկկողմ փոխշահավետ կապերի ամրապնդմանը,

պայմանավորվեցին հետևյալի մասին.

Հոդված 1

Կողմերը սույն Համաձայնագրին և իրենց երկրների ազգային օրենսդրություններին համապատասխան կնպաստեն միմյանց միջև գիտատեխնիկական համագործակցության զարգացմանն ու ամրապնդմանը:

Հոդված 2

Սույն Համաձայնագրի շրջանակներում գիտատեխնիկական համագործակցության ուղղությունները կսահմանվեն՝ ելնելով երկու երկրների գիտության, տեխնոլոգիաների զարգացման և գիտական արդյունքի ներդրման շահերից:

Հոդված 3

Կողմերի միջև սույն Համաձայնագրով նախատեսված համագործակցությունը կիրականացվի երկու պետությունների համապատասխան նախարարությունների, գերատեսչությունների, գիտությունների ազգային ակադեմիաների, գիտահետազոտական հիմնարկների և կազմակերպությունների, բարձրագույն ուսումնական հաստատությունների, առանձին գիտնականների և մասնագետների միջոցով, նրանց իրավասության սահմաններում և ազգային օրենսդրություններին համապատասխան նրանց միջև ուղղակի համաձայնագրերի և պայմանագրերի հիման վրա:

Հոդված 4

Սույն Համաձայնագրի շրջանակներում համագործակցությունը կարող է իրականացվել հետևյալ ձևերով.

- Կողմերի տնտեսությունների համար առաջնահերթ նշանակություն ունեցող համաֆինանսավորման սկզբունքով համատեղ գիտական, գիտատեխնիկական և

սոցիալ-տնտեսական ծրագրերի և նախագծերի, ինչպես նաև հիմնարար հետազոտությունների իրականացումը, գիտահետազոտական աշխատանքների արդյունքների համատեղ հրատարակում,

- համատեղ գիտահետազոտական կոլեկտիվների ձևավորում, ներառյալ դաշտային համատեղ հետազոտություններ և արշավախմբեր, նորարարական և այլ տիպի կազմակերպություններ, որոնք կապահովեն հետազոտությունների, մշակումների իրականացում և նոր տեխնոլոգիաների իրացում,
- գիտական կադրերի պատրաստում, գիտնականների և մասնագետների փոխանակություն,
- համատեղ սեմինարների, գիտաժողովների, աշխատանքային հանդիպումների և ստաժավորումների կազմակերպման միջոցով գիտնականների և մասնագետների որակավորման բարձրացում:

Համագործակցությունը կարող է իրականացվել նաև փոխհամաձայնեցված այլ ձևերով, որոնք կապահովեն սույն Համաձայնագրի իրականացումը:

Համագործակցության ձևերը ընտրելիս և սահմանելիս Կողմերը ղեկավարվում են միմիայն գիտության զարգացման, երկու պետությունների ու ժողովուրդների տնտեսական ու հասարակական առաջընթացի շահերով:

#### Հոդված 5

Սույն Համաձայնագրի իրականացման նպատակով Կողմերը կստեղծեն գիտատեխնիկական համագործակցության հարցերի համատեղ Հանձնաժողով:

Իր գործունեությունը կազմակերպելու նպատակով Հանձնաժողովը մշակում և հաստատում է աշխատանքային կանոնակարգ:

Հանձնաժողովի քննարկման առարկա պետք է դառնան գիտության և տեխնոլոգիաների բնագավառներում կողմերի փոխադարձ շահերը ներկայացնող գերակա ուղղությունների ճշգրտումը, համագործակցության նոր ոլորտների և ձևերի բացահայտումը, համատեղ ծրագրերի ձևավորումը և համագործակցության արդյունավետության բարձրացմանն ուղղված առաջարկությունների մշակումը:

Սույն Համաձայնագրով սահմանված համագործակցության կազմակերպումը իրականացնում են հայկական կողմից՝ Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության կառավարման ոլորտում գործող Գիտության պետական կոմիտեն, Արաբական Միացյալ Էմիրությունների կողմից՝ .....

#### Հոդված 6

Հաշվի առնելով գիտական հետազոտությունների և փորձարարական կոնստրուկտորական մշակումների համաշխարհային մակարդակի պահպանման կարևորությունը, Կողմերը կօժանդակեն նոր տեխնոլոգիաների փոխանակմանը, հատուկ ուշադրություն կդարձնեն երկու պետությունների գիտնականների համար նորագույն և եզակի փորձարարական կայանքներից, սարքերից, սարքավորումից օգտվելու հարցում մատչելիության ապահովմանը, ինչպես նաև համագործակցության հիմունքներով կմասնակցեն դրանց մշակման, արտադրության և ձեռք բերման աշխատանքներին:

#### Հոդված 7

Կողմերը պայմանավորվում են, որ համագործակցության ընթացքում ստացված գիտական և գիտատեխնիկական տեղեկատվությունը, երկու պետություններում գործող ազգային օրենսդրություններին համապատասխան, հրապարակման ընդունված

եղանակների շրջանակներում մատչելի կլինի համաշխարհային գիտական հասարակությանը:

#### Հոդված 8

Կողմերը, հաշվի առնելով ազգային օրենսդրությունը, ապահովում են մտավոր սեփականության իրավունքների պաշտպանությունը, որը կարող է ստեղծվել սույն Համաձայնագրի շրջանակներում համագործակցության արդյունքում: Մտավոր սեփականության նկատմամբ իրավունքների պաշտպանության և օգտագործման հարցերը կարգավորվում են սույն Համաձայնագրի 3-րդ հոդվածով նախատեսված մարմինների և կազմակերպությունների միջև կնքված համաձայնագրերով՝ ելնելով Կողմերի օրենսդրության պահանջներից:

#### Հոդված 9

Սույն Համաձայնագիրը չի շոշափում Կողմերի իրավունքները և պարտավորությունները, որոնք բխում են նրանց կողմից կնքված միջազգային պայմանագրերից և համաձայնագրերից:

Սույն Համաձայնագրի դրույթներն իրականացվում են Կողմերից յուրաքանչյուրի օրենսդրությանը համապատասխան:

#### Հոդված 10

Կողմերը փոխադարձ համաձայնությամբ կարող են սույն Համաձայնագրում փոփոխություններ և լրացումներ կատարել, որոնք ձևակերպվում են առանձին արձանագրություններով: Նշված արձանագրություններն ուժի մեջ կմտնեն սույն Համաձայնագրի ուժի մեջ մտնելու համար սահմանված կարգով և կկազմեն դրա անբաժանելի մասը:

#### Հոդված 11

Սույն Համաձայնագրի մեկնաբանման և կիրառման ընթացքում Կողմերի միջև ծագած վեճերը և տարաձայնությունները լուծվում են խորհրդակցությունների և բանակցությունների միջոցով:

#### Հոդված 12

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում դրա ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ Կողմերի պետությունների ազգային օրենսդրությամբ սահմանված ընթացակարգերի ավարտի մասին դիվանագիտական ուղիներով վերջին ծանուցումը ստանալու օրվանից: Սույն Համաձայնագիրը կնքվում է հինգ տարի ժամանակով:

Սույն Համաձայնագրի գործողության ժամկետն ինքնաբերաբար երկարաձգվում է հաջորդ երկամյա ժամանակահատվածների համար, եթե Կողմերից որևէ մեկը Համաձայնագրի ժամկետի ավարտից վեց ամիս առաջ դիվանագիտական ուղիներով մյուս Կողմին չծանուցի Համաձայնագիրը դադարեցնելու իր մտադրության մասին:

Սույն Համաձայնագրում կատարվող փոփոխությունները կամ Համաձայնագրի գործողության դադարեցումը չեն կարող փոփոխել Կողմերի ստանձնած իրավունքները և պարտավորությունները, որոնք առաջացել են սույն Համաձայնագրի շրջանակներում մինչև

նման փոփոխությունների գործողության մեջ մտնելը կամ Համաձայնագրի գործողության ավարտը:

Կատարված է .....թ, 200 թ. ....-ին, երկու բնօրինակով, յուրաքանչյուրը հայերեն, արաբերեն և անգլերեն լեզուներով, ընդ որում, բոլոր տեքստերն էլ հավասարազոր են: Սույն Համաձայնագրի մեկնաբանման ժամանակ տարաձայնություններ առաջանալու դեպքում նախապատվությունը տրվում է անգլերեն լեզվով տեքստին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԷՄԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

ԱՐԱԲԱԿԱՆ ՄԻԱՑՅԱԼ  
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

### ՏԵՂԵԿԱՆՔ

**„Հայաստանի Հանրապետության կառավարության և Արաբական Միացյալ Էմիրությունների կառավարության միջև գիտատեխնիկական համագործակցության մասին համաձայնագրի ստորագրման նպատակահարմարության մասին**

Ներկայում Հայաստանի Հանրապետության գիտության ոլորտում ընթանում է բարեփոխումների լայնածավալ գործընթացը, որի հիմնական ուղղություններից մեկը գիտության ոլորտում միջազգային համագործակցության զարգացումն ու դրա խթանումն է:

Հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության և Արաբական Միացյալ Էմիրությունների միջև համագործակցային կապերի ներկա մակարդակը ու դրանց զարգացման ներուժը՝ նպատակահարմար ենք համարում ամուր գիտական կապեր հաստատել երկու պետությունների համապատասխան կառույցների միջև:

Հարկ է նշել, որ Աբու Դաբի քաղաքում 2002 թվականի ապրիլի 20-ին ստորագրվել է „Հայաստանի Հանրապետության կառավարության և Արաբական Միացյալ Էմիրությունների կառավարության միջև առևտրատնտեսական և տեխնիկական համագործակցության մասին համաձայնագիրը, որի շրջանակներում առևտրական և տնտեսական երկկողմ համագործակցությունը խթանելու նպատակով նախատեսված է իրականացնել գիտնականների փոխանակում: Գիտատեխնիկական ոլորտում առանձին համաձայնագրի ստորագրումը թույլ կտա առավել ընդլայնել տվյալ ոլորտում համագործակցությունը՝ աջակցելով երկու պետությունների տնտեսությունների համար առաջնահերթ նշանակություն ունեցող համատեղ գիտական, գիտատեխնիկական և սոցիալ-տնտեսական ծրագրերի և նախագծերի համաֆինանսավորման սկզբունքով իրականացմանը,

գիտնականների և մասնագետների փոխանակմանը, ինչպես նաև գիտական կադրերի պատրաստմանը :

ՀՀ կրթության և գիտության նախարար Արմեն Աշոտյան

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Հայաստանի Հանրապետության կառավարության և Արաբական Միացյալ Էմիրությունների կառավարության միջև գիտատեխնիկական համագործակցության մասին» համաձայնագիրը ստորագրելու առաջարկությանը համաձայնություն տալու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի վերաբերյալ

«Հայաստանի Հանրապետության կառավարության և Արաբական Միացյալ Էմիրությունների կառավարության միջև գիտատեխնիկական համագործակցության մասին» համաձայնագիրը ստորագրելու առաջարկությանը համաձայնություն տալու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ չունենք:

ՀՀ արդարադատության նախարարի  
առաջին տեղակալ



Գ. ՄԱԼԻՍՅԱՆ

Իրավական ակտերի փորձաքննության  
վարչության պետ՝



Կ. ԽՏԻՅԱՆ